

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՒԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ Ա. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՅ ՅԵՏՈՅ

ԷԴԻՏԱ Գ. ԳԶՈՅԵԱՆ (editagzoyan@gmail.com)

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Դեռևս 1648ին, Ուեստֆալեան Համակարգով՝ հաստատուած պետութիւնների ինքնիշխանութեան գաղափարն իր առաջին լուրջ ճեղքուածքը տուեց Առաջին Համաշխարհային Պատերազմից յետոյ: Պատերազմի քաոսն ու աներաժութիւնները, դրան յաջորդած խաղաղութեան ծգտումն ու վայրագութիւնների անպատժելիութեան դէմ հանրային բողոքը հիմք հանդիսացան անցեալ համակարգի դէմ պայքարի եւ մարդու կեանքի եւ արժանապատուութեան համար հիմնաշափային (նորմատիւ) հիմք կառուցելու համար: Պետութեան ինքնիշխանութեան՝ ոչ բացարձակ լինելու հանդէպ այս նոր վերաբերմունքն առաջ բերեց պետութիւնների հանդէպ քրէական պատասխանատուութիւն սահմանելու հարցը՝ պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների համար: Այս զարգացումների կիզակէտում էր նաեւ Ա. համաշխարհային պատերազմում Քառեակ Դաշինքի կազմում հանդէս եկած Օսմանեան Կայսրութիւնը:

Պատերազմի քօղի ներքոյ թուրքական իշխանութիւններն իրականացրեցին Օսմանեան Կայսրութեան հայ ազգաբնակչութեան ոչնչացումը՝ զանգուածային կոտորածների, տեղահանութիւնների եւ բռնի ձուլման միջոցով: Արդէն 1915 Մայիսի 24ին Դաշնակից Տէրութիւններից Ռուսաստանը, Մեծն Բրիտանիան եւ Ֆրանսիան հանդէս եկան համատեղ յայտարարութեամբ, որով հայերի դէմ իրականացուող գործողութիւնները որակեցին որպէս յանցագործութիւններ «մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ»՝ հիմք դնելով միջազգային քրէական իրաւունքում նոր յանցագործութեան ձեւաւորմանը:

Փարիզի վեհաժողովի ընթացքում ստեղծուեց պատերազմի հեղինակների պատասխանատուութեան եւ պատիժների սահմանման յանձնաժողովը, որը պէտք է պարզէր Ա. համաշխարհայինը սանձազերծողներին եւ պատիժներ սահմանէր *պատերազմական եւ մարդկութեան օրէնքների դէմ* յանցագործութիւններ իրականացրած անձանց նկատմամբ: Յանձնաժողովը քննութեան առաւ նաեւ Թուրքիայի պատասխանատուութեան հարցը՝ այն դիտարկելով մարդկութեան օրէնքների դէմ յանցագործութիւնների ծիրում: Եւ չնայած մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւններ ձեւակերպումը բառացիօրէն չմտաւ յետպատերազմեան հաշտութեան պայմա-

¹ Ուեստֆալեան համակարգը (1648), միջազգային իրաւունքի սկզբունք է, ըստ որի իրաքանչիւր պետութիւն սեփական տարածքի նկատմամբ ունի գերիշխանութիւն, եւ արգելք է այլ պետութիւնների կողմից իր ներքին գործերին միջամտելուն:

նագրերի մէջ, սակայն, ըստ էութեան, Սեւրի Պայմանագրի 230րդ յօդուածը վերաբերում էր այդ նոր յանցագործութեանը, որը իր իրաւական ձեւակերպումը ստացաւ միայն Բ. Համաշխարհային Պատերազմից յետոյ:

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՒ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ. ԴԱՇՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԱՐՁԱԳԱՆԳԸ

Առաջին համաշխարհային պատերազմին իր մուտքն Օսմանեան Կայսրութիւնն օգտագործեց մի շարք միջազգային պարտաւորութիւններից հրաժարուելու համար, որոնց թում յատկապէս կարեւորում էին հայերի հանդէպ նախկինում ստանձնած պարտաւորութիւնները: 1914 Դեկտեմբերի 16ին Առաջին Համաշխարհային Պատերազմի սկսուելուց հինգ ամիս անց Օսմանեան Կայսրութիւնը կայսերական հրովարտակով չեղարկեց հայկական բարենորոգումների՝ 1914 Փետրուարի 8ի համաձայնագիրը²:

1915 Սեպտեմբերի 5ին օսմանեան արտաքին գործերի նախարար Խալիլը Գերմանիայի դեսպանին տեղեկացրեց, որ օսմանեան կառավարութիւնը որոշել է ուժը կորցրած ճանաչել 1865ի Փարիզի Պայմանագիրը³, 1871ի Լոնդոնի Յայտարարութիւնը⁴, եւ 1878ի Բեռլինի Պայմանագիրը⁵,

² Հայկական բարենորոգումների համաձայնագիրը ստորագրուել էր 1914 Փետրուարի 8ին Թուրքիայի եւ Ռուսաստանի միջեւ այլ պետութիւնների համաձայնութեամբ, որը միջազգային պարտաւորութիւններ էր սահմանում թուրքական կառավարութեան համար՝ յարգել եւ պաշտպանել հայ փոքրամասնութիւնների իրաւունքները (Vahakn Dadrian, “Genocide as a Problem of National and International Law: The World War I Armenian Case and Its Contemporary Legal Ramifications,” *Yale Journal of International Law*, 1989:14(2), էջ 263:

³ 1856ի Փարիզի Պայմանագիրը կնքուել էր Ռուսական եւ Օսմանեան կայսրութեան ու վերջինիս դաշնակիցներ Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի, Սարդինիայի միջեւ, որով վերջ էր տրուում Ղրիմի պատերազմին: Յօդուած Թ.ն սահմանում էր, որ սուլթանը ֆիրման էր արձակել, որով պէտք է բարելաւուէր կայսրութեան քրիստոնեայ բնակչութեան վիճակը՝ առանց կրօնի կամ ցեղի խտրութեան: Միաժամանակ, նշում էր, որ սա ոչ մի դէպքում չի կարող յիշեալ տէրութիւններին իրաւունք տալ՝ համատեղ կամ առանձինն միջամտելու սուլթանի եւ իր հպատակների յարաբերութիւններին եւ կայսրութեան ներքին կառավարմանը (ամբողջական բնագիրը՝ https://content.ecf.org.il/files/M00934_TreatyOfParis1856English.pdf):

⁴ Լոնդոնի Պայմանագիրը կնքուել էր 1871ի Մարտի 13ին Պրուսիայի, Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի եւ Իտալիայի միջեւ: Սրանով թէւէ չեղեալ յայտարարուեցին 1856ի Փարիզի Պայմանագրի մի շարք յօդուածներ, Թ. յօդուածը չի չեղարկուել եւ մնացել է անփոփոխ:

⁵ Բեռլինի Պայմանագիրը կնքուել էր Աստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Մեծն Բրիտանիայի եւ Իռլանդիայի, Իտալիայի, Ռուսաստանի եւ Օսմանեան կայսրութեան միջեւ 1877–78 ռուս-թուրքական պատերազմի արդիւնքում: Պայմանագրի 61րդ յօդուածը վերաբերում էր հայերին, որով Բարձր Դուռը պար-

քանի որ դրանք «քաղաքական ձեռնաշղթայ» էին դարձել կայսրության համար՝ «մարդասիրական միջամտության» գաղափարի քօղի տակ իր ներքին գործերին խառնուելու հնարատրություն տալով Արեւմուտքին եւ Ռուսական Կայսրութեանը⁶։ Յատկանշական է, որ Օսմանեան Կայսրութիւնում Գերմանիայի դեսպան Մետերնիխը 1916 Սեպտեմբերի 5ի իր զեկոյցում ընդգծում է Բեռլինի Պայմանագրի 61րդ յօդուածի վերաբերեալ թուրքական անհանգստութեան մասին⁷։

Կայսերական հրովարտակից միքանի ամիս անց Օսմանեան Կայսրութիւնը սկսեց հայերի ոչնչացման գործընթացը։

Հայերի կոտորածների մասին առաջին տեղեկութիւնները ստանալուց յետոյ՝ 1915 Ապրիլի 15ին, Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Սերգէյ Սազոնովը հեռագրում է Փարիզում եւ Լոնդոնում ռուս դեսպաններին, որ տեղեկութիւններ են ստացուել ասիական Թուրքիայի միջխանութեան եւ թուրքերի ու քրդերի կողմից հայերի կոտորածների մասին եւ առաջարկում էր ֆրանսիական եւ անգլիական կառավարութիւններին հանդէս գալ համատեղ յայտարարութեամբ՝ ուղղուած օսմանեան կառավարութեանը, որով «հայերի կոտորածի համար անձնական պատասխանատուութիւնը կը դրուի Թուրքիայի մինիստրների խորհրդի բոլոր անդամների, ինչպէս եւ այդ իրադարձութիւններին առնչուող քաղաքացիական ու զինուորական պաշտօնատար բոլոր անձանց վրայ»⁸։

Արդէն 1915 Մայիսի 24ին Մեծն Բրիտանիան, Ֆրանսիան եւ Ռուսաստանը Օսմանեան Կայսրութեան հայ բնակչութեան տեղահանութեան եւ կոտորածների առնչութեամբ հանդէս են գալիս համատեղ յայտարարութեամբ⁹։ Երեք դաշնակից պետութիւնները յայտարարում են, որ հայերի

տաւորում էր հայաբնակ մարզերում տեղական կարիքներից բխող բարելաւմներն ու բարենորոգումները իրականացնել եւ ապահովել հայերի անվտանգութիւնը չերբէզներից ու քրդերից։ Բարձր Դուռը պարտաւորում էր պարբերաբար տեղեկացնել այդ նպատակի համար կատարած քայլերի մասին, իսկ տէրութիւնները հետեւելու էին դրանց իրականացմանը։

⁶ Պայմանագրերից հրաժարուելու ամբողջական բնագրերը տե՛ս՝ Friedrich von Kraelitz-Greifenhorst, “Die Ungültigkeitserklärung des Pariser und Berliner Vertrages durch die osmanische Regierung,” in *Osterreichische Monatsschrift für den Orient*, 1917, vol. 43, էջ 56–60։

⁷ Dadrian, էջ 264։

⁸ Юрий Барсегов (ред.), *Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарии* (Եւրոյի Բարսեղով [խմբ.], Հայոց Յեղասպանութիւն. Թուրքիայի պատասխանատուութիւնը եւ միջազգային հանրութեան պարտաւորութիւնները։ Փաստաթղթեր եւ մեկնաբանութիւններ), *հղր.* 1, Մոսկուա, Գարդարիկի 2002, էջ 237։

⁹ Միաժամանակ պէտք է նշել, որ Էջմիածնի կաթողիկոսը Գէորգ Ե.ը դիմել էր ռուսական կառավարութեանը՝ խնդրելով օգտագործել իր միջնորդութիւնը, որպէսզի թուրքական կառավարութիւնը դադարեցնի հայ քաղաքացիական բնակչութեան

դեմ այս յանցագործության համար պատասխանատու է թուրքական կառավարությունը: Յատկանշական է, որ մեկ տարի անց՝ 2016ին, նոյն Ռուսաստանը եւ Ֆրանսիան մերժեցին անգլիացիների նմանատիպ առաջարկը՝ հանդես գալ Գերմանիայի կողմից պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտումների դեմ¹⁰:

Հայկական կոտորածների մասին Դաշնակիցների բնագրում նշում էր. Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում քրդերի եւ թուրքերի կողմից օսմանեան իշխանութիւնների բացայայտ թողտուութեամբ, իսկ երբեմն էլ ուղղակի համագործակցութեամբ Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ: Ապրիլի կէսերին հայերի կոտորած է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Զէյթունում եւ ամբողջ Կիլիկիայում: Գլխովին կոտորուած են Վանի շրջակայքի հարիւրաւոր գիւղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղը շրջապատուել է քրդերի կողմից: Միեւնոյն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարութիւնը բանտարկում եւ անտանելի ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչութեանը: Նկատի ունենալով Թուրքիայի կողմից իրագործուած մարդկութեան եւ քաղաքակրթութեան դեմ ուղղուած այս նոր յանցագործութիւնները՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարութիւնները սոյնով հրապարակաւ յայտարարում են, որ նրանք այդ բոլոր ոճրագործութիւնների անձնական պատասխանատուութիւնը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների վրայ, ինչպէս եւ տեղական այն ներկայացուցիչների վրայ, որոնք մասնակից են նման կոտորածին¹¹:

Յայտարարութիւնը կարեւոր էր միքանի տեսանկիւնից. նախ, առաջին անգամ մարդկութեան դեմ ուղղուած յանցագործութիւնները որպէս հայե-

կոտորածը թուրքական տարածքում (*Papers Relating to the Foreign Relations of the United States, U.S. Government Printing Office, 1928, էջ 980*: Առաւել մանրամասն տե՛ս՝ Ruben Safrastyan, “Genocide of the Armenians in the Ottoman Empire: Last Week of May 1915,” *Fundamental Armenology*, 2018:1(7), էջ 1-67. նաեւ՝ Զաւէն Մսըրլեան, *Ամերիկայի Միացեալ Նահանգներու արտաքին քաղաքականութիւնը եւ Հայկական Հարցը (1900-2009)*, Պէյրութ, Սիփան հրատ., 2010:

¹⁰ James Willis, *Prologue to Nuremberg: The Politics and Diplomacy of Punishing War Criminals of the First World War*, Contributions in legal studies (Book 20) Greenwood Pub Group, 1982, էջ 23:

¹¹ Ըստ Սաֆրաստեանի, յայտարարութիւնից յետոյ Օսմանեան Կայսրութեան ղեկավարների մօտ վախ առաջացաւ հնարաւոր անհատական պատասխանատուութիւնից, ուստի քայլեր ձեռնարկեցին «օրինականացնելու» հայերի տեղահանութիւնները եւ կիսելու պատասխանատուութիւնը՝ ընդունելով տեղահանութեան մասին օրէնքն ու կառավարութեան որոշումը: Յայտարարութեան վերաբերեալ որոշ մանրամասների եւ թուրքերի պատասխանի վերաբերեալ տե՛ս՝ Ռուբէն Սաֆրաստեան, «Անտանտի երեք երկրների 1915 թ. մայիսիտեան յայտարարագիրը եւ գերմանա-թուրքական պատասխանը», *Հայոց ցեղասպանութիւն – 100, ճանաչումից՝ հպտուցում, Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու*, Երեւան, 2016, էջ 28-36:

ցակարգային դրոյթ ի յայտ են գալիս միջազգային հարթակում հենց հայկական զանգուածային կոտորածների առնչությամբ¹²: Յանցագործութիւն բառի կիրառումը մատնանշում էր քրէական պատասխանատուութեան անհրաժեշտութեան մասին: Համատեղ յայտարարութեան մէջ առաջին անգամ խօսուում էր նաեւ պետութիւնների ղեկավարների անձնական պատասխանատուութեան մասին՝ չնայած գոյութիւն ունեցող անձեռնմխելիութեան սկզբունքին: Եւ թէեւ յայտարարութիւնը քաղաքական բնոյթ ունէր, սակայն խիստ կարեւոր էր նրանով, որ, խախտելով պետութիւնների ինքնիշխանութեան սկզբունքը եւ զարգացնելով մարդասիրական միջամտութիւնների թեզը՝ առաջին անգամ բարձրացում էր պատերազմի ծիրից դուրս սեփական քաղաքացիների հանդէպ յանցանքների մասին՝ հիմք դնելով միջազգային քրէական իրաւունքում նոր յանցագործութեան ձեւատրմանը, որը դեռ պէտք է սահմանուէր¹³:

Յատկանշական է, որ յայտարարութեան նախնական՝ ռուսական տարբերակում խօսքը գնում էր «քրիստոնէութեան եւ քաղաքակրթութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների մասին», սակայն, ֆրանսիական կողմը, վախճնալով իր եւ անգլիական գաղութների մուսուլման ազգաբնակչութեան հնարաւոր դժգոհութիւնից, առաջարկում է օգտագործել «մարդկութեան դէմ յանցագործութիւններ» ձեւակերպումը¹⁴:

Պատմութեան մէջ սա առաջին անգամ էր, երբ տարբերութիւն էր դրում պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների միջեւ: Յետագայում այս թեզը զարգացուեց Փարիզի խաղաղութեան վեհաժողովում, երբ խօսք էր գնում մեղաւորներին «պատերազմական յանցագործութիւնների կամ մարդկութեան դէմ ուղղուած

¹² Այս հանգամանքն ընդգծուել է նախկին Եուգօսլաւիայի եւ Ռուանդայի գործերով միջազգային քրէական դատարաններում: Մասնատրապէս, Ժան Պոլ Ակայեսուի դատավճռում ընդգծուած է, որ 1915 Մայիսի 28ին հայկական կոտորածների հետ կապուած Ռուսաստանի, Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսիայի կառավարութիւնները հանդէպ եկան յայտարարութեամբ՝ անուանելով դրանք «մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւններ», ինչի համար թուրքական կառավարութիւնը պէտք է պատասխանատուութեան ենթարկուի՝ կոտորածների մէջ մասնակից իր գործակալների հետ (ICTR Judgment, Trial Chamber I, *Jean-Paul Akayesu*, 2 September 1998, ICTR-96-4, էջ 565):

¹³ Առաւել մանրամասն յայտարարութեան իրաւական վերլուծութեան մասին տե՛ս՝ Sévane Garibian, “From the 1915 Allied Joint Declaration to the 1920 Treaty of Sèvres: Back to an International Criminal Law in Progress,” *Armenian Review*, 2010:1-2, էջ 87-102. Նաեւ՝ Rustam Atadjanov, “Humanness as a Protected Legal Interest of Crimes against Humanity: Conceptual and Normative Aspects,” *International Criminal Justice Series, Volume 22*, Berlin, Springer, 2019, էջ 78-79:

¹⁴ Նարեկ Պողոսեան, «Մարդկութեան դէմ ուղղուած յանցագործութիւնների եւ ցեղասպանութեան փոխադարձ կապն ու դրսեւորումը Հայոց ցեղասպանութեան օրինակով», *Ցեղասպանագիտական հանդէս*, 2018:6(2), էջ 96:

յանցագործությունների համար» պատժելու մասին: «Մարդկության դեմ ուղղուած յանցագործություններ» ձեակերպումը, սակայն, բառացիօրէն չներառուեց Ա. աշխարհամարտին յաջորդած եւ ոչ մի միջազգային պայմանագրում, թէեւ Սեյրի Պայմանագրի 230րդ յօդուածն անուղղակիօրէն վերաբերում էր այսպէս-կոչուած մարդկության դեմ յանցագործություններին:

ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎ. ԹՈՒՐԻՔԱՅԻՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԵԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

«Մարդկության դեմ ուղղուած յանցագործություններ» հասկացութիւնը բազմիցս քննարկուեց Ա. համաշխարհային պատերազմին յաջորդած ժամանակաշրջանում: Մասնատրապէս, այն նշուած էր 1918 Դեկտեմբերի 2ին Ֆրանսիայի, Իտալիայի եւ Մեծն Բրիտանիայի՝ Հոլանդիային ուղղուած պահանջի մէջ՝ արտայանձնելու գերմանական կայսրին՝ Միջազգային Դատարանում վերջինիս դատելու նպատակով: Որպէս այդ պահանջի հիմնատրում Բ. կետում նշուած էր նաեւ միջազգային իրաւունքի եւ *մարդկության դեմ յանցագործությունների* համար անձնական պատիժների անխուսափելիութիւնը՝ որպէս կարեւոր անվտանգային երաշխիք յետագայում յարձակողական պատերազմ սանձազերծելու կամ միջազգային իրաւունքը խախտելու փորձերի կանխարգելման տեսանկիւնից¹⁵:

1918ին ստեղծուած Պատերազմական Օրէնքների եւ Սովորոյթների Խախտումների Բրիտանական Հետաքննական Յանձնաժողովն իր առաջին միջանկեալ զեկոյցում խորհուրդ էր տալիս ստեղծել «Միջազգային Դատարան, որը կազմուած կը լինի գլխաւոր դաշնակից տէրութիւնների եւ ԱՄՆ ներկայացուցիչներից՝ նախկին կայսերը եւ այլ իրաախախտներին պատերազմի օրէնքների եւ սովորոյթների, ինչպէս նաեւ *մարդկության օրէնքների* խախտման համար դատելու եւ պատժելու նպատակով»: Այս հրահանգներն էլ հանդիսացան Փարիզի խաղաղութեան վեհաժողովում Մեծն Բրիտանիայի քաղաքականութեան հիմքը¹⁶:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտից յետոյ միջազգային ընտանիքը հաւաքուեց Փարիզում՝ խաղաղութեան պայմանգիր կնքելու համար: Հրատապ էր նաեւ պատերազմի ընթացքում տեղի ունեցած յանցագործությունների պատժի հարցը: Վեհաժողովի հենց սկզբից Ֆրանսիայի վարչապետ Զորջ Քլեմանսօն առաջ քաշեց երեք հրատապ հարց՝ պատերազմի հեղինակների պատասխանատուութեան, պատերազմի ընթացքում կատարուած յանցագործությունների համար պատիժների եւ աշխա-

¹⁵ Foreign Relations of the United States, Diplomatic Papers 2 (FRUS), 1919, Paris Peace Conference (PPC), US GPO, 1934, էջ 653-54:

¹⁶ Harry M. Rhea, "The Commission on the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties and its Contribution to International Criminal Justice After World War I," *Criminal Law Forum*, 2014:25, էջ 150:

տանքի միջազգային օրնէտորութեան ստեղծման անհրաժեշտութեան¹⁷: ԱՄՆ նախագահ Ուուրօ Ուիլսընն առաջարկում էր «բարոյականութեան» դէմ իրականացուած ազգային եւ անհատական յանցագործութիւնների հարցը լուծել Փարիզի խաղաղութեան վեհաժողովի բարձրագոյն մարմնի՝ Գերագոյն Խորհրդի իրաւասութեան շրջանակում: Սակայն, Բրիտանիայի վարչապետ Լոյդ Ջորջի պնդմամբ հարցը դրում է վեհաժողովի լիակատար նիստի օրակարգում¹⁸: Արդիւնքում՝ 1919 Յունուարի 25ին Փարիզի խաղաղութեան վեհաժողովի Բ. լիակատար նստաշրջանի ընթացքում որոշում է ստեղծել պատերազմական յանցագործութիւնները քննող պատմութեան մէջ առաջին միջազգային մարմինը՝ Պատերազմի Հեղինակների Պատասխանատուութեան եւ Պատիժների Սահմանման Յանձնաժողով (ՊՀՊՊՍՅ) (երբեմն նաեւ՝ Տասնհինգի Յանձնաժողով), որը պէտք է պարզէր Ա. համաշխարհային պատերազմը սանձազերծողներին եւ պատիժներ սահմանէր պատերազմական յանցագործութիւններ իրականացրած անձանց նկատմամբ: ՊՀՊՊՍՅն բաղկացած էր հինգ մեծ տէրութիւնների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ, Ճապոնիա) երկուական եւ հինգ փոքր՝ պատերազմից առաւել տուժած երկրների մէկական ներկայացուցիչներից (Բելգիա, Յունաստան, Լեհաստան, Ռումինիա եւ Սերբիա): ՊՀՊՊՍՅն ունէր հետեւեալ յանձնարարութիւնը.-

- ա) Պատերազմի հեղինակների պատասխանատուութեան հարցը:
 - բ) Գերմանական Կայսրութեան եւ նրա դաշնակիցների կողմից պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտման հարցը:
 - գ) Թշնամի ուժերի որոշ, նաեւ՝ բարձրաստիճան անդամների կողմից իրականացրած ոճիրների համար պատասխանատուութեան հարցը:
 - դ) Յատուկ դատարանի կազմը եւ ընթացակարգի սահմանման հարցը՝ այս յանցագործութիւնները քննելու համար:
 - ե) Վերոնշեալ խնդիրների հետ կապուած հարցեր, որոնք կարող են ծագել հետաքննութեան ընթացքում, եւ որոնք ՊՀՊՊՍՅն կը գտնի օգտակար եւ տեղին քննելու համար¹⁹:
- ՊՀՊՊՍՅն իր աշխատանքները բաժանեց երեք ենթայանձնաժողովների միջեւ²⁰: Առաջին ենթայանձնաժողովը քննելու էր քրէական մեղադ-

¹⁷ Foreign Relations of the United States, Diplomatic Papers 1, 3 (FRUS), US GPO, 1943, էջ 169:

¹⁸ *Historical Origins of International Criminal Law: Volume 1*, Morten Bergsmo, CHEAH Wui Ling and Yi Ping (editors) Torkel Opsahl Academic EPublisher, 2014, FICHL Publication Series No. 20 (2014), էջ 176:

¹⁹ *History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War*, United Nations War Crimes Commission, H.M. Stationery Office, 1948, էջ 32:

²⁰ *La Paix de Versailles: Responsabilites des Auteurs de la Guerre et Sanctions*, Paris, Les Editions Internationales, 1930, էջ 16-29:

րանքների հարցը եւ պէտք է տեղեկութիւններ հաաքէր եւ բացայայտէր այն յանցաւոր արարքները, որոնք հանգեցրել էին Ա. համաշխարհային պատերազմին, եւ որոնք տեղի էին ունեցել ռազմական գործողութիւնների ընթացքում: Երկրորդ ենթայանձնաժողովը, որի իրաասութեան տակ էր պատերազմի պատասխանատուութեան հարցը, առաջին յանձնաժողովի ձեռք բերած տեղեկատուութեան հիման վրայ պէտք է ուսումնասիրէր հնարաւոր դատաւարութիւնների հարցը, պատրաստէր յանցագործների ցուցակներ, եւ զբաղուէր դատարանի հարցով, որտեղ այդ յանցագործները պէտք է դատուէին: Երրորդ ենթայանձնաժողովը զբաղուելու էր պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտման համար պատասխանատուութեան հարցերով եւ քրէական յանցանքների հիման վրայ պէտք է պատրաստէր զեկոյց, մատնանշէր մեղաւորներին եւ այն դատարանը, որտեղ պէտք է վերջիններս դատուէին²¹:

Որոշում է, որ առաջին՝ քրէական մեղադրանքների ենթայանձնաժողովն իր աշխատանքների իրականացման համար պէտք է ստանայ շահագրգիռ պետութիւնների կողմից ներկայացուած յուշագրեր՝ այն յանցագործութիւնների վերաբերեալ, որոնց զոհն են եղել պատերազմի ընթացքում: Ենթայանձնաժողովին ներկայացում է տաս յուշագիր՝ Ֆրանսիայի, Բելգիայի, Իտալիայի, Սերբիայի, Յունաստանի, Լեհաստանի եւ Ռումինիայի ներկայացուցիչների կողմից²²: Յունական պատուիրակութեան կողմից 1919 Մարտի 14ին ենթայանձնաժողովին է ներկայացում Փարիզում հայկական պատուիրակութեան կազմած յուշագիրը՝ հայկական կոտորածների հեղինակների պատասխանատուութեան վերաբերեալ²³: Յատկանշական է, որ հայկական յուշագիրը միակն էր, որ ներկայացուել էր Յանձնաժողովի անդամ չհանդիսացող երկրի կողմից: Այն հակիրճ անդրադառնում էր հայկական կոտորածներին եւ տեղահանութիւններին, ապա յիշեցնում 1915 Մայիսի 24ի Դաշնակից Տէրութիւնների յայտարարութիւնը: Յուշագրի մէջ հայկական պատուիրակութիւնն անդրադառնում էր նաեւ Գերմանիայի Կայսրութեանը՝ նշելով. «*իր կրաւորական եւ մեղաւոր վերաբերմունքով գերմանական կառավարութիւնը, ով կարող էր լռութեան չմարմնել կոտորածները եւ կանխել դրանք, ունի պատասխանատուութեան իր մասնաբաժինը: Որոշ տեղերում կոտորածները տեղի էին ունենում գերմանացի զինուորների ներկայութեամբ եւ երբեմն նաեւ մասնակցութեամբ (Լիման ֆոն Սանդերս, Էրզրումում Բոսսուէթ փաշա, միւսները Կիլիկիայում, Վանում, այլուր): շարք տեղերում գերմանացի սպաները առեանգում էին հայ աղջիկներին*»²⁴:

²¹ Նոյն:

²² Նոյն, էջ 32-34:

²³ Յուշագրի ամբողջական հայերէն թարգմանութիւնը տե՛ս՝ յաւելում 1ում:

²⁴ *La Paix de Versailles: Responsibilités des Auteurs de la Guerre et Sanctions*, էջ 223:

Այնուհետեւ յուշագիրը մանրամասն ներկայացնում էր հայկական կոտորածների իրական մեղաւորներին՝ նրանց բաժանելով չորս խմբի.-

ա) ծրագիրը մշակողներ,

բ) հրամաններն արձակողներ եւ կոտորածների կազմակերպիչներ,

գ) կոտորածները ղեկավարողներ,

դ) կոտորածները իրականացնողներ²⁵։

Ըստ հայկական կողմի՝ մեղադրուողների շրջանակը բաական լայն էր. *«Կազմակերպուած լինելով կառավարութեան կողմից, ղեկավարուելով վարչական ու ռազմական ղեկավարութեան եւ համայնքների իշխանութիւնների եւ երեւելիների կողմից՝ այն իրականացրել են ոստիկանութիւնը, զինուորները եւ բնակչութիւնը: Հերեաբար, մենք իրատունք ունենք որպէս իրական մեղաւորներ համարել այն անձանց, ովքեր 1915 Ապրիլից գլխատրում էին նշուած գործառոյթները»*²⁶։

Յուշագրում հայկական կողմը Դաշնակիցների ուշադրութիւնն էր հրափրում այն հանգամանքի վրայ, որ թէեւ իրենց դրոյմամբ Կոստանդնուպոլսում սկսուել էին դատավարութիւններ երիտթուրք առաջնորդների եւ հայկական կոտորածների այլ մեղաւորների դէմ, սակայն թուրքական կողմը ձգձգում էր դատավարութեան ընթացքը, ինչն անհանգստութեան տեղիք էր տալիս։ Հայկական պատուիրակութիւնը խնդրում էր Դաշնակիցների կառավարութիւններին որքան հնարաւոր է շուտ իրենց ձեռքը վերցնել արդարադատութեան իրականացումը՝ արեւելքում քրիստոնեաներին սպառնացող նոր եւ զարհուրելի աղէտը կանխելու համար²⁷։

Յուշագրի հետ միասին Հայկական Ազգային Պատուիրակութիւնը (ՀԱՊ) քրէական մեղադրանքները քննող ենթայանձնաժողովին էր ներկայացրել հայկական կոտորածների մեղաւորների ցուցակներ, որոնք կազմուել էին Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի կողմից²⁸։

Հաշուի առնելով այն հանգամանքը, որ պատրիարքարանն իր տրամադրութեան տակ ունէր թուրք ոճրագործների դէմ բազմաթիւ հիմնաւորուած մեղադրանքներ, կոտորածների վերաբերեալ փաստաթղթեր, հենց վերջինիս էր վստահուել կազմել եւ Դաշնակիցներին ներկայացնել հայերի դէմ իրականացուած զանցանքների մեղաւորների ցուցակ։ Ըստ պատրիարքարանի՝ այդ ցուցակը կազմելու համար երկու տարբերակ է ունեցել.-

²⁵ Նոյն, էջ 223-225։

²⁶ Նոյն։

²⁷ Նոյն, էջ 225։

²⁸ Երուսաղէմի հայոց պատրիարքարանի արխիւում պահուում են Կ.Պոլսի պատրիարքարանի կողմից կազմուած Հայոց Ցեղասպանութեանը մասնակից թուրք ոճրագործների ցուցակներ։ Կան նաեւ առանձին նահանգների եւ գաւառների համար կազմուած նմանատիպ ցուցակներ։ Ոճրագործների ցուցակներ կան նաեւ Նուպարեան Մատենադարանի Անտոնեան ֆոնդում, Բոստոնի ՀՅԴաշնակցութեան արխիւում, Հայաստանի Ազգային Արխիւում։

ա) Ներկայացնել բոլոր մեծ եւ փոքր ոճրագործների ցուցակը, որոնց դէմ մեղադրանքներ են առաջադրուել զոհերի բարեկամների կողմից:

բ) Բոլոր ոճրագործների անունների միջից ընտրել գլխատուր մեղատուրների անունները եւ ներկայացնել դրանք ու վերջիններիս իրականացրած յանցագործությունները²⁹:

Քանի որ առաջին դէպքում, ըստ պատրիարքարանի, ստիպուած էր լինելու ներկայացնել հազարատուր ոճրագործների ցուցակներ, որոնք ընդգրկելու էին հարիւր հազարատուր անուններ, որոնք դեռ վերջնական չէին լինելու, պատրիարքարանը ցուցակը կազմել է երկրորդ կէտի համաձայն՝ ընտրելով եւ ներկայացնելով միայն խոշոր յանցագործների անունները: Ցուցակը կազմուել էր՝ ելնելով Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան (ՄիԱԿ) կազմակերպչական կառուցուածքից հետեւեալ տրամաբանութեամբ: ՄիԱԿը Թուրքիայում ներկայացուած էր ակումբներով: Իւրաքանչիւր գաւառում, քաղաքում կային նման ակումբներ, որոնք կապի մէջ էին գաւառի գլխատուր ակումբի հետ: Այս կենտրոնական ակումբներն էլ իրենց հերթին կախուած էին Կոստանդնուպոլսի կենտրոնական ակումբից: Տարեկան խորհրդաժողովները, որին մասնակցում էին բոլոր նահանգների պատուիրակները, ծառայում էին ուժեղացնելու այս հզօր կազմակերպութեան բոլոր մասերի միջեւ միասնականութիւնը, որն իվերջոյ կարողացաւ իր ցանցով ծածկել Օսմանեան Կայսրութեան ողջ տարածքը: Գաւառներում, ինչպէս մայրաքաղաքում, ՄիԱԿի ակումբների անդամների շարքերում էին բոլոր յայտնի պաշտօնեաներն ու գործարարները:

Ցուցակներում ընդգրկուած էին ՄիԱԿի ակումբների պատասխանատու քարտուղարները, նահանգների կառավարիչները, ռազմական հրամանատարները, պահակազօրի ղեկավարները, ոստիկանութեան ղեկավարները, գլխատուր պաշտօնեաները, մուֆթիները, էշրաֆները, որոնց անունները նշուած էին որպէս Լքեալ Գոյքի Յանձնաժողովների միջոցով հայկական ունեցուածքը թալանողներ եւ Թեքքիլաթը Մահսուէի մարդասպանների խմբերի կազմակերպման միջոցով կոտորածներ իրականացնողներ:

Ցուցակները կազմուած էին ըստ նահանգների, իւրաքանչիւրի համար տրուած էին յաւելեալ տեղեկութիւններ: Ա. ցուցակը Պոլսի համար էր, միւսները ներկայացուած էին ըստ մայրաքաղաքից իրենց հեռավորութեան: Կապի բացակայութեան պատճառով ամբողջական չէին շատ նահանգների ցուցակներ, որոնց վրայ պատրիարքարանը դեռ պէտք է աշխատէր:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ԵՒ ՊԱՏԻԺՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԶԵԿՈՅՑԸ

Երկու ամիս տեւած աշխատանքների եւ բոլոր հետաքննությունների արդիւնքում Յանձնաժողովը պատրաստում է զեկոյց, որը միաձայն ընդունում

²⁹ Երուսաղէմի հայոց պատրիարքարանի արխիւ (անմշակ):

են բոլոր անդամները՝ ԱՄՆ եւ Ճապոնիայի պատուիրակությունների՝ որոշակի վերապահումներով³⁰: 1919 Մարտի 29ին զեկոյցը ներկայացում է Փարիզի խաղաղության վեհաժողովին: Չեկոյցն անդրադառնում էր հետեւեալ հարցերին՝ պատերազմի հեղինակների պատասխանատվության (պատերազմի նախապատրաստում, Բելգիայի եւ Լիքսեմբուրգի չեզոքության խախտում), պատերազմի օրէնքների եւ սովորոյթների խախտման, անձնական պատասխանատվության, համապատասխան դատարանի ստեղծման եւ ընթացակարգի սահմանման, եւ առաջարկներ էր ներկայացնում խաղաղության պայմանագրերում ներառուելիք յօդուածների շուրջ³¹:

Յանձնաժողովն իր ուսումնասիրությունների արդիւնքում եկել էր այն համոզման, որ յարձակողական պատերազմի նախաձեռնման հիմնական մեղաւորը Գերմանիան եւ Աւրո-Հունգարիան էին, ապա՝ Թուրքիան եւ Բուլղարիան³²: Չեկոյցը մատնանշում էր, որ Բալկանեան Պատերազմներից յետոյ թուրք-գերմանական յարաբերութիւնները տակաւ աւելի էին սերտանում, իսկ Ա. համաշխարհային պատերազմի սկսուելուց յետոյ Թուրքիան իր ռազմական եւ ծովային ուժերը յանձնել էր գերմանացի զօրավար Ֆոն Սանդերսին եւ ծովակալ Սուշոնին³³:

Երկրորդ հարցի վերաբերեալ Յանձնաժողովն, ուսումնասիրելով ձեռք բերուած բազմաթիւ ապացոյցները, փաստում էր, որ Գերմանիան եւ իր դաշնակիցները պատերազմի ընթացքում կատարել էին զինուորականների եւ քաղաքացիների իրաւունքների կոպտագոյն խախտումներ, որոնք դէմ էին պատերազմի օրէնքների եւ սովորոյթների, ինչպէս նաեւ՝ մարդկութեան օրէնքներին: Յանձնաժողովի զեկոյցը նշում էր, որ չնայած գոյութիւն ունեցած յստակ կարգաւորումների եւ մարդկութեան թելադրանքի՝ Գերմանիան եւ նրա դաշնակիցները իրականացրել էին վայրագութիւն վայրագութեան հետեւից, պատերազմը վարել էին բարբարոսական եւ անօրինական մեթոդներով՝ խախտելով գործող պատերազմական օրէնքներն ու սովորոյթները եւ մարդկութեան տարրական օրէնքները, եւ թշնամի երկրների այն անձինք, ովքեր մեղաւոր են եղել պատերազմի օրէնքների եւ սովորոյթների ու մարդկութեան օրէնքների խախտման համար, պէտք է ենթարկուեն քրեական պատասխանատվութեան³⁴:

³⁰ *Violation of the laws and customs of war: reports of majority and dissenting reports of American and Japanese members of the Commission of responsibilities, conference of Paris, 1919*, Oxford, Clarendon Press, 1919, էջ 58-81:

³¹ *History of the United Nations War Crimes Commission and the Development of the Laws of War*, էջ 33:

³² "Commission on the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties," *The American Journal of International Law*, 1920:1/2(14), էջ 98:

³³ Նոյն, էջ 104:

³⁴ Նոյն, էջ 181:

Բրիտանական յանձնաժողովի զեկոյցը, որը պատրաստուել էր Լորդ Բրայսի կողմից, ֆրանսիական յանձնաժողովի նիւթերը, բելգիական կառավարութեան հրատարակութիւնները, ինչպէս նաեւ անդամ երկրների՝ այդ թում հայկական պատուիրակութեան յուշագրերը, որոնք ներկայացուել էին Յանձնաժողովին, բազմաթիւ տուեալներ էին պարունակում յանցանքների մասին: Յանձնաժողովի գնահատմամբ անհնար էր պատկերացնել յանցանքների աւելի բազմազան եւ ցաւալի ցուցակ, քան այն, որ կազմուել էր հաւաքուած նիւթերի հիման վրայ: Ըստ զեկոյցի՝ «ռազմական եւ քաղաքացիական անձանց իրաւունքների ոտնահարումները բազմապատկուել էին ամենադաժան եղելութիւններով, որոնք պարզունակ բարբարոսութեան եւ ժամանակակից գիտութեան բոլոր աղբիւրների համադրմամբ ձեւատրել էին ահաբեկչական համակարգ, ինչը խնամքով ծրագրատրուած էր եւ իրականացուել էր մինչեւ վերջ: Չէին խնայել անգամ բանտարկեալներին, վիրաւորներին, կանանց եւ երեխաներին»³⁵:

Ելնելով հաւաքուած տեղեկութիւններից՝ Յանձնաժողովը կազմել էր Ա. համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած յանցագործութիւնների ոչ-ամբողջական յաւելում-ցուցակ՝ «Ամփոփ աղիասակ Կենտրոնական կայսրութիւնների եւ նրանց դաշնակիցների իշխանութիւնների եւ զօրքերի կողմից պատերազմական օրէնքների ու սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների դէմ կատարուած իրաւախախտումների վերաբերեալ», որը պարունակում էր հետեւեալ 32 յանցանքները՝ (1) սպանութիւններ եւ կոտորածներ. համակարգուած ահաբեկչութիւն; (2) պատանդներին մահապատիժներ; (3) քաղաքացիական անձանց խոշտանգում; (4) քաղաքացիների դիտաւորեալ սովամահութիւն; (5) բռնաբարութիւն; (6) աղջիկների եւ կանանց առեւանգում՝ հարկադիր մարմնավաճառութեան նպատակով; (7) քաղաքացիական անձանց տեղահանում; (8) քաղաքացիական անձանց ներկալում անմարդկային պայմաններում; (9) քաղաքացիական անձանց հարկադիր աշխատանք՝ կապուած թշնամու ռազմական գործողութիւնների հետ; (10) ինքնիշխանութեան յափշտակում ռազմական գրաւման ընթացքում; (11) գրաւեալ տարածքի բնակիչների շրջանում հարկադիր զինուորագրում; (12) գրաւեալ տարածքի բնակիչներին ապաազգայնացնելու փորձեր (13) թալան; (14) գոյքի բռնագրաւում; (15) անօրինական գանձումներ; (16) արժոյթի արժեգրկում եւ կեղծ արժոյթի թողարկում; (17) հաւաքական տուժերի նշանակում; (18) դիտաւորեալ անբարոյութիւն ու ունեցումների ոչնչացում; (19) անպաշտպան վայրերի դիտաւորեալ ռմբակոծութիւն; (20) կրօնական, բարեգործական, կրթական, պատմական շէնքերի եւ յուշարձանների դիտաւորեալ ոչնչացում; (21) առեւտրական նաւերի եւ ուղեւորատար նաւերի ոչնչացում առանց նախազգուշացման եւ առանց ուղեւորների կամ անձնակազմի անվտանգութեան ապահովման նախապայմանների;

³⁵ Նոյն, էջ 113:

(22) ձկնորսական նաւերի եւ փրկարարական նաւերի ոչնչացում; (23) հիւանդանոցների դիտաւորեալ ռմբակոծութիւն; (24) հիւանդանոցային նաւերի վրայ յարձակում եւ ոչնչացում; (25) Կարմիր Խաչին վերաբերող այլ կանոնների խախտում; (26) վնասակար եւ *ասֆիքսացող* գազերի օգտագործումը; (27) պայթուցիկ կամ ընդլայնող փամփուշտների եւ այլ անմարդկային միջոցների կիրառում; (28) չխղճալու հրամաններ տալը; (29) վիրատորների եւ ռազմագերիների հանդէպ վատ վերաբերմունք; (30) ռազմագերիների զբաղումն աշխատանքների համար; (31) հրադադարի դրօշների չարաշահում; (32) ջրհորների թունաւորում:

Յուցակում ներկայացուած մեղադրանքներից շատերը նեղ իմաստով կարելի էր դասել պատերազմական յանցագործութիւնների շարքին: Սակայն, այդ շարքում կային Գերմանիայի, Թուրքիայի եւ Աւստրիայի տարածքում սեփական ժողովրդի դէմ իրականացրած յանցագործութիւններ, այդ թում՝ կոտորած, պարբերական ահաբեկչութիւն, պատանդների եւ քաղաքացիական անձանց սպանութիւններ, բռնաբարութիւն, կանանց եւ աղջիկների հարկադրաբար անբարոյականութեան դրդում, քաղաքացիական անձանց բռնի տեղահանութիւն եւ գողութիւններ, որոնք իրականացուել էին ոչ թէ թշնամի, այլ սեփական քաղաքացիների հետ: Այս մեղադրանքներն հիմնականում վերաբերում էին թուրքերի կողմից հայերի եւ յոյների կոտորածներին, հետապնդումներին եւ ասիական եւ եւրոպական Թուրքիայից նրանց արտաքսմանը: Յաւելուածում նաեւ մեղադրանք կար ուղղուած Աւստրիայի դէմ, համաձայն որի 1915ին աւստրիական զօրքերը թաւան էին իրականացրել Գորիցիայի բնակչութեան դէմ, որն այդ ժամանակ աւստրիական քաղաք էր³⁶:

Ինչպէս տեսնում ենք, մարդկութեան օրէնքների դէմ յանցանքները տուեալ դէպքում հիմնականում վերաբերում էին Օսմանեան Կայսրութիւնում հայերի եւ յոյների կոտորածներին: Յանձնաժողովը, թուրք պաշտօնեաների եւ այլ անձանց դէմ առաջ քաշելով «մարդկութեան օրէնքների դէմ յանցագործութիւնների» հասկացութիւնը, ըստ էութեան, հիմնում էր 1907ի Հաագայի համագումարի (IV) այսպէս-կոչուած Մարտենսի Յօդուածի վրա: Դրանով համագումարն ստորագրած տէրութիւնները պարտաւորուել էին, որ համագումարով չկարգաւորուած դէպքերի համար, պատերազմող կողմերը եւ ազգաբնակչութիւնը մնում են պաշտպանութեան եւ ազգերի իրաւունքի սկզբունքների ներքոյ, որոնք ձեւաւորուել են քաղաքակիրթ ազգերի կողմից կիրառման արդիւնքում՝ մարդկութեան օրէնքների եւ հասարակական գիտակցութեան թելանդրանքով³⁷: Հենց այս ենթահողում էր, որ

³⁶ Egon Schwelb, “Crimes against Humanity,” *British Year Book of International Law*, 1946:23, էջ 181:

³⁷ *The Hague conventions and declarations of 1899 and 1907: accompanied by tables of signatures, ratifications and adhesions of the various powers, and texts of*

Յանձնաժողովի անդամ եւ Յունաստանի արտաքին գործերի նախարար Նիկոլաոս Պոլիտիսը առաջարկում է ընդունել պատերազմական յանցագործությունների նոր տեսակ, որը կը ծածկէր հայերի կոտորածները. «Տեխնիկայէս այս գործողությունները [հայկական կոտորածները] չեն մտնում քրեական օրէնագրքի որեւէ յօդուածի տակ, սակայն հանդիսանում են մարդկութեան օրէնքի դէմ ուղղուած ծանր յանցանքներ»³⁸: Չնայած ԱՄՆ ներկայացուցիչ Ռոբըրտ Լանսինգի (ԱՄՆ պետքարտուղար, Յանձնաժողովի նախագահ) եւ Ջէյմս Սքոթի (միջազգային իրաւունքի յայտնի մասնագէտ) պնդումների, որ նման օրէնքը յետադարձ ուժի կիրառման արգելքի խնդիր ունի, Յանձնաժողովի անդամներից շատերը համաձայնում են յոյն պատուիրակի հետ: Արդիւնքում, Յանձնաժողովն իր զեկոյցում առանձնացրեց քաղաքացիական բնակչութեան դէմ ուղղուած հետեւեալ խախտումները, որոնք, փաստօրէն, ընկնում էին մարդկութեան օրէնքների դէմ ուղղուած յանցագործությունների տակ՝ համակարգուած ահաբեկչութիւն, սպանություններ եւ կոտորածներ, կանանց դէմ սեռական բռնությունները, մասնաւոր սեփականութեան բռնագրաւում, գողություններ, համայնքներին, կրթական հաստատություններին պատկանող գոյքի բռնագրաւում, մասնաւոր եւ հասարակական գոյքի դիտաւորեալ ոչնչացում, տեղահանություններ եւ հարկադիր աշխատանք, քաղաքացիներին մահապատժի ենթարկելը պատերազմական յանցագործությունների կեղծ մեղադրանքներով եւ քաղաքացիների եւ ռազմական անձնակազմի դէմ ուղղուած խախտումները³⁹:

Յաւելուածում ներկայացուած յանցագործությունների մէջ հայերի մասին տեղեկություններ կային հետեւեալ կէտերում.

1. Սպանություններ, կոտորածներ, համակարգուած ահաբեկչութիւն: Թուրքերի կողմից համակարգուած իրականացուող հայերի կոտորածներ գերմանացիների մասնակցութեամբ, որոնք տեղի էին ունեցել թուրքական գաւառներում, յատկապէս հայկական վիլայէթներում: Աւելի քան 200,000 զոհեր: Կոտորուած, կենդանի այրուած, խեղդամահ արուած Վանի, Եփրատի լճերում, Սեւ ծովում⁴⁰:

6. Կանանց եւ երիտասարդ աղջիկների խաբէութեամբ առեւանգումներ՝ նրանց հարկադրաբար անբարոյականութեան դրդելու նպատակով: Մեծ թոով հայ կանայք, երիտասարդ աղջիկներ եւ երեխաներ փակուած են հարէմներում եւ իսլամացուած են⁴¹:

reservations, N., Scott, J. Brown (eds.), New York, Oxford University Press, 1915, էջ 101-102: Նշենք, որ նման յօդուած կար նաեւ 1899ի Հաագայի համագումարի մէջ, որն Օսմանեան Կայսրութիւնը ստորագրել եւ վաւերացրել էր, իսկ 1907ի Հաագայի համագումարն ստորագրել, սակայն չէր վաւերացրել:

³⁸ Willis, էջ 14:

³⁹ *Historical Origins of International Criminal Law: Volume 1*, էջ 176:

⁴⁰ *La Paix de Versailles: Responsibilites des Auteurs de la Guerre et Sanctions*, էջ 488:

⁴¹ Նոյն, էջ 495:

7. Քաղաքացիների տեղահանություն: Աւելի քան մէկ միլիոն հայեր տեղահանուել էին Միջագետք եւ Սիրիա, որտեղ մեծ թուով մահանում էին վատ վերաբերմունքից, սովից եւ հիանդութիւններից⁴²:

Հայերի մասին տեղեկութիւնները Յանձնաժողովը հաաքել էր հետեւեալ աղբիւրներից. Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքի յուշագիրը՝ հասցեագրուած Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսիայի դեսպաններին, ՀԱՊԻ յուշագիրը՝ Փարիզի խաղաղութեան վեհաժողովին, Սիրիային եւ Հայաստանին Ամերիկեան Նպաստամատոյց Յանձնաժողովի զեկոյցը, Վիպրոնթ Բրայսի՝ Հայերի Հանդէպ Վերաբերմունքը Օսմանեան Կայսրութիւնում գրքից⁴³, Հալէպի գերմանական դպրոցի ուսուցիչ Մարտին Նիէպաժի զեկոյցը⁴⁴, եւ Թուրքիայում գերմանացի մի ճամփորդի 1915ի նոթերը:

Փաստօրէն, Յանձնաժողովը տարբերակում է մտցնում պատերազմական յանցագործութիւնների եւ մարդկութեան դէմ յանցագործութիւնների միջեւ, սակայն մարդկութեան դէմ յանցագործութիւնները որպէս միջազգային քրէական յանցանքի տեսակ միայն Բ. համաշխարհային պատերազմից յետոյ Լոնդոնի կանոնադրութեան մէջ էին ստանալու իրենց վերջնական ձեւակերպումը:

Անձնական պատասխանատուութեան հետ կապուած, Յանձնաժողովը եկել էր այն եզրակացութեան, որ թշնամի երկրներին պատկանող բոլոր անձինք, որքան էլ բարձր պաշտօն եւ դիրք ունենան, այդ թում՝ պետութեան ղեկավարները, ովքեր մեղաւոր էին պատերազմի օրէնքների եւ սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների խախտման համար, պէտք է ենթարկուէին քրէական պատասխանատուութեան⁴⁵:

Յանձնաժողովի քննարկումները վերաբերում էին նաեւ միջազգային քրէական դատարանի ստեղծման հարցերին⁴⁶: Այս ուղղութեամբ Յանձնաժողովն եզրակացրել էր, որ պէտք է ստեղծուի բարձրագոյն դատարան, եւ որ թշնամի պետութիւնները պէտք է ճանաչեն միջազգային այդ դատարանի իրաւասութիւնը: Արգելում էր նաեւ համաներում շնորհել այն անձանց, ովքեր մեղաւոր էին ճանաչուել պատերազմի օրէնքների եւ սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների խախտումների համար: Թշնամի երկրները պարտաւորուելու էին նաեւ յանձնել նշեալ յանցանքների մէջ մեղադրուող

⁴² Նոյն, էջ 496:

⁴³ *The Treatment of Armenians in the Ottoman Empire, 1915-1916: Documents Presented to Viscount Grey of Falloden by Viscount Bryce*, London, 1916:

⁴⁴ *The Horrors of Aleppo seen by a German Eyewitness Dr. Martin Niepage*, London, T. Fisher Unwin LTD, 1916.

⁴⁵ *On the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties*, էջ 117:

⁴⁶ *Violation of the laws and customs of war: reports of majority and dissenting reports of American and Japanese members of the Commission of responsibilities, conference of Paris, 1919*, էջ 20:

անձանց, ինչպես նաեւ բոլոր այն նիւթերն ու փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ էին դատավարութիւնների համար⁴⁷:

Փաստօրէն, յստակ էր, որ յանձնաժողովի զեկոյցը տարանջատում էր պատերազմական օրէնքների եւ սովորոյթների եւ մարդկութեան օրէնքների դէմ իրականացուած յանցանքները՝ անգամ ստեղծուելիք բարձրագոյն դատարանին օժտելով այդ երկու յանցագործութիւնները քննելու իրաստութեամբ: Մինչ Ա. համաշխարհային պատերազմը Հաագայի համագումարով կարգաւորում էին միայն պետութիւնների միջեւ պատերազմ վարելու կանոնները, իսկ Յանձնաժողովը քննութեան առաւ յանցագործութեան նոր տեսակ, որը միտում էր պատժելու սեփական քաղաքացիների դէմ պետութեան կատարած յանցանքները՝ զգալիօրէն խախտելով պետութեան ինքնիշխանութեան սկզբունքը:

Յանձնաժողովի զեկոյցին կցուած էին ԱՄՆ եւ Ճապոնիայի անդամների առանձին կարծիքները: Ամերիկեան անդամները դէմ էին «մարդկութեան օրէնքներ» եզրի կիրառմանը՝ գտնելով, որ մեծամասնութիւնը սխալուել է այն աւելացնելով զեկոյցի մէջ⁴⁸: Ըստ ԱՄՆ ներկայացուցիչների՝ դատական համակարգը գործ ունի եւ կիրառում է միայն գործող օրէնքները, իսկ բարոյականութեան դէմ զանցանքները եւ մարդկութեան օրէնքների եւ սկզբունքների դէմ գործողութիւնները պէտք է թողնել այլ մարմինների: Միա առարկութիւնը կապուած էր այն հանգամանքի հետ, որ գոյութիւն չունի «մարդկութիւն» հասկացութեան յստակ եւ համընդհանուր էաչափ, եւ այն ժամանակի, տեղի եւ պայմանների հետ, եւ անգամ մէկ դատատրի խղճի հետ կարող է փոխուել⁴⁹: Այսինքն, ամերիկեան կողմը պնդում էր որ չկայ յստակ հիմնաչափ, որը սահմանում է, թէ որոնք են մարդկութեան դէմ օրէնքները եւ պատիժ սահմանում դրանց խախտման համար: Ամերիկեան կողմի այս դիրքորոշումը մեծապէս ազդեց գաղափարի ապագայի վրայ:

Ճապոնի ընդդիմութիւնը կապուած էր օրէնքի յետադարձ ուժի (*ex post facto*) արգելքի եւ յաղթողների արդարադատութեան հետ, այսինքն՝ ճապոնական կողմը գտնում էր, որ օրէնքը չի կարող յետադարձ կիրառուել նախկինում տեղի ունեցած յանցագործութիւնների վրայ եւ համարում էր դա յաղթողների կողմից իրականացուող արդարադատութիւն⁵⁰:

⁴⁷ *On the Responsibility of the Authors of the War and on Enforcement of Penalties*, էջ 123-24:

⁴⁸ Schwelb, էջ 181:

⁴⁹ *Violation of the laws and customs of war; reports of majority and dissenting reports of American and Japanese members of the Commission of responsibilities*, էջ 58-81. նաեւ՝ James Willis, էջ 75:

⁵⁰ Gerry Simpson, "Writing the Tokyo Trial," in *Beyond Victor's Justice? The Tokyo War Crimes Trial Revisited*, Yuki Tanaka, Tim McCormack and Gerry Simpson (eds.), Leiden/Boston, Martinus Nijhoff Publishers, 2011, էջ 26:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՐԱՒԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ՍԵՒՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

Յանձնաժողովի աշխատանքի արդիւնքում Փարիզի խաղաղութեան վեհաժողովին ներկայացուեցին «Պատիժներ» անուանումը կրող յօդուածներ, որոնք պէտք է մտցուէին Ա. համաշխարհային պատերազմում պարտուած երկրների հետ կնքուելիք խաղաղութեան պայմանագրերում⁵¹։ Վերսայի⁵² (228-230 յօդուածները), Սէն Ժերմէն ան Լէյի⁵³ (173-176 յօդուածները), Տրի-անոնի⁵⁴ (157-159 յօդուածներ), Նէոյի սիւլ Սէնի⁵⁵ (118-120 յօդուածներ) եւ Սեւրի (228-230 յօդուածները)։ Չնայած Յանձնաժողովի գեկոյցին՝ ամերիկեան կողմի պնդմամբ «մարդկութեան օրէնքներ» եզրն, այնուամենայնիւ, չմտաւ նշուած պայմանագրերի յօդուածներում, որտեղ խօսքը միայն պատերազմական օրէնքների եւ սովորոյթների խախտման մասին էր, որոնք սահմանուած էին Հաագայի համագումարներով։

Ինչ վերաբերում է Սեւրի Պայմանագրին, ապա վերջինիս 226-228րդ յօդուածները կրկնում էին վերոնշեալ պայմանագրերի նշուած յօդուածները։ Մասնատրապէս, 226րդ յօդուածով թուրքական կառավարութիւնը ճանաչում էր Դաշնակից Տէրութիւնների իրաւունքը ռազմական դատարաններ ներկայացնելու այն անձանց, որոնք մեղադրուում էին պատերազմական օրէնքներն ու սովորոյթները խախտելու մէջ։ Նման անձինք, մեղաւոր ճանաչուելու դէպքում, դատապարտուում են օրէնքով սահմանուած պատժամիջոցների։ Այս դրոյթը կիրառուելու էր անկախ Թուրքիայի կամ նրա դաշնակիցների տարածքում տեղի ունեցող կամ ունեցած դատավարութեան։ Թուրքիայի կառավարութիւնը պարտաւորուում էր նաեւ Դաշնակից Տէրութիւններին կամ նրանցից որեւէ մէկի պահանջով վերջիններիս յանձնել պատերազմի օրէնքներն ու սովորոյթները խախտելու մէջ մեղադրուող անձանց։

227րդ յօդուածով Դաշնակից Տէրութիւններից մէկի քաղաքացիների նկատմամբ յանցաւոր արարքների համար մեղաւորները պէտք է ներկա-

⁵¹ Նոյն, էջ vii-viii:

⁵² Վերսայի Պայմանագիրը խաղաղութեան պայմանագրերից ամենագլխատուն էր, կնքուել է Գերմանիայի եւ Դաշնակից Տէրութիւնների միջեւ 1919 Յունիսի 28ին:

⁵³ Saint-Germain-en-Layeի Պայմանագիրը ստորագրուել է 1919ի Սեպտեմբերի 10ին Դաշնակից Տէրութիւնների եւ այսպէս-կոչուած Գերմանա-աւստրիական Հանրապետութեան կողմից (ընդգրկում էր նախկին Աւստրո-Հունգարիայի Կայսրութեան գերմանախօս տարածքները: 1919ին այս տարածքների վրայ ստեղծուեց առաջին աւստրիական հանրապետութիւնը):

⁵⁴ Trianonի խաղաղութեան պայմանագիրը կնքուել է Դաշնակից Տէրութիւնների եւ Հունգարիայի միջեւ՝ որպէս Աւստրո-Հունգարիայի իրաւայաջորդ երկրներից մէկը:

⁵⁵ Neuilly-sur-Seineի խաղաղութեան Պայմանագիրը Դաշնակից Տէրութիւնների եւ Բուլղարիայի միջեւ, կնքուել է 1919 Նոյեմբերի 27ին:

յացուէին տուեալ տէրութեան ռազմական ատեաններին, իսկ մէկից աւելի դաշնակից երկրների քաղաքացիների հանդէպ նման գործողութիւնների համար՝ վերջիններիս կողմից կազմուած ռազմական ատեանին:

228րդ յօդուածը թուրքական կառավարութեանը պարտաւորեցնում էր տրամադրել բոլոր փաստաթղթերն ու տեղեկատուութիւնը, որոնք անհրաժեշտ կը լինեն այդ յանցատուր գործողութիւնները բացայայտելու, յանցագործներին պատասխանատուութեան ենթարկելու եւ պատասխանատուութեան արդար գնահատման համար: Պայմանագրի 229րդ յօդուածը, 226-228րդ յօդուածի դրոյթները տարածում էր Օսմանեան Կայսրութիւնից անջատուած տարածքների վրայ:

Սակայն, Սեւրի Պայմանագիրն էականօրէն տարբերում էր Փարիզի խաղաղութեան համակարգի միւս պայմանագրերից: 226-228րդ յօդուածներից բացի պայմանագրում կար յաւելեալ յօդուած, որը թէւ բացայայտ չէր օգտագործում «մարդկութեան դէմ յանցագործութիւններ» կամ «մարդկութեան օրէնքների դէմ յանցագործութիւններ» ձեւակերպումները, սակայն, ըստ էութեան վերաբերում էր դրան՝ հանդիսանալով պատերազմի հեղինակների պատասխանատուութեան եւ պատիժների սահմանման յանձնաժողովի աշխատանքների եւ մօտեցումների տրամաբանական շարունակութիւնը:

Այսպէս, Սեւրի Պայմանագրի 230րդ յօդուածը, որով թուրքական կառավարութիւնը պարտաւորում էր Դաշնակից Տէրութիւններին յանձնել այն անձնաց, որոնք պատասխանատու էին նախկին Թուրքական Կայսրութեան՝ 1914 Օգոստոսի 1ի դրութեամբ մաս կազմած *տարածքում կազմակերպուած կոտորածների համար*, որոնք իրականացուել են պատերազմի ընթացքում: Դաշնակից Տէրութիւնները իրենց իրաւունք են վերապահում ստեղծել դատարան, որը պէտք է դատէր այդ անձանց, իսկ թուրքական կառավարութիւնը պարտաւորում է ճանաչել այդ Դատարանը: Այն դէպքում, երբ Ազգերի Լիգան բաւարար ժամանակում կը ստեղծի դատարան, որը իրաւասու կը լինի զբաղուել նշուած կոտորածներով, Դաշնակից Տէրութիւնները իրենց իրաւունք էին վերապահում վերոնշեալ մեղադրեալներին բերել այդ դատարան, իսկ Թուրքիայի կառավարութիւնը պարտաւորում է հաասարապէս ճանաչել այդ դատարանը:

Փաստօրէն, Սեւրի Պայմանագիրը տարբերում էր Ա. համաշխարհային պատերազմի աւարտին կնքուած միւս պայմանագրերից: Այն, ըստ էութեան, շարունակում էր 1915ի հռչակագրով թուրքական կառավարութեանը սեփական քաղաքացիների դէմ գործած յանցագործութիւնների համար պատասխանատուութեան ենթարկելու թեզը: Թէւ ամերիկեան կողմի պնդմամբ «մարդկութեան դէմ յանցագործութիւններ» կամ «մարդկութեան օրէնքների խախտումներ» յանցագործութիւնները չմտան ետպատերազմեան ոչ մի պայմանագրում, սակայն Սեւրի Պայմանագրի 230րդ յօդուածն, ըստ էութեան, այդ մասին էր: Յետագայում՝ արդէն Բ. համաշխարհայինից

յետոյ, «մարդկութեան դէմ յանցագործութիւնները» որպէս միջազգային յանցագործութիւն մտան 1945ի Լոնդոնի Կանտնադրութեան մէջ:

Սակայն Սեւրի Պայմանագիրը չվաւերացուեց եւ հետեւաբար կեանքի չկոչուեց: Ա. համաշխարհային պատերազմի խաղաղութեան պայմանագիրը Դաշնակիցների եւ Թուրքիայի հետ ստորագրուեց միայն 1923ին Լոզանում: Լոզանի Պայմանագիրը ոչ միայն չէր պարունակում որեւէ յօդուած պատերազմական եւ մարդկութեան դէմ յանցագործութիւններ իրականացրած անձանց պատժի վերաբերեալ, այլեւ կից ունէր «Համաներման հռչակագիր» (յաւելում 2), որով ներում էր շնորհում նաեւ Հայոց Ցեղասպանութիւնը իրականացրած բոլոր մեղաւորներին⁵⁶:

Յաւելում 1.

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ՅՈՒՇԱԳԻՐԸ՝ ՆԵՐԿԱՅԱՑՈՒԱԾ ՅՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ (13 ՄԱՐՏ 1919)⁵⁷

Հայաստանում տեղի ունեցած կոտորածները եւ տեղահանութեան անուան տակ կազմակերպուած յարձակումները զարհուրելի էին իրենց ծաւալներով եւ սարսափներով, եւ յանցագործներին անպատիժ թողնելը մեծագոյն անարդարութիւն կը լինի մարդկութեան եւ համաշխարհային խղճի դէմ: Աւելին, դա հնարաւորութիւն կը տայ կոտորածը ծրագրատրած եւ իրականացրած անձանց նոր յանցագործութիւններ իրագործել:

Մենք յիշեցնում ենք, որ 1915ի Մայիսի 28ին Ֆրանսիայի, Մեծն Բրիտանիայի եւ Ռուսաստանի կառավարութիւնները Օսմանեան Կայսրութեան կառավարութեանը ներկայացրեցին հետեւեալ յայտարարութիւնը.

«Ամբողջ վերջին ամսուայ ընթացքում քրդերի եւ թուրքերի կողմից օսմանեան իշխանութիւնների բացայայտ թողութեամբ, իսկ երբեմն էլ ուղղակի համագործակցութեամբ Հայաստանում տեղի են ունենում հայերի կոտորածներ: Ապրիլի կէսերին հայերի կոտորած է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Ակնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Չէլթոնում եւ ամբողջ Կիլիկիայում: Գլխովին կոտորուած են Վանի շրջակայքի հարիւրաւոր գիւղերի բնակիչները, բուն Վանում հայկական թաղը շրջապատուել է քրդերի կողմից: Միեւնոյն ժամանակ Կոստանդնուպոլսի թուրքական կառավարութիւնը բանտարկում եւ անտանելի ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչութեանը:

Նկատի ունենալով Թուրքիայի կողմից իրագործուած մարդկութեան եւ քաղաքակրթութեան դէմ ուղղուած այս նոր յանցագործութիւնները՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի եւ Անգլիայի դաշնակից կառավարութիւնները սոյնով հրապարակաւ յայտարարում են, որ նրանք այդ բոլոր ոճրագործութիւնների անձնական պատասխանատւութիւնը դնում են թուրքական կառավարութեան բոլոր անդամների վրայ, ինչպէս եւ տեղական այն ներկայացուցիչների վրայ, որոնք մասնակից են կը լինեն նման կոտորածին»:

⁵⁶ Հռչակագրի բնագիրը տե՛ս՝ http://www.mfa.gov.tr/viii_-declaration-of-amnesty.en.mfa (մատչում՝ 9 Փետրուար 2020):

⁵⁷ *La Paix de Versailles: Responsibilites des Auteurs de la Guerre*, էջ 222-25:

Կոտորածները ծրագրատրուել էին 1915 սկզբին, իրականացուել Ապրիլից, կատաղի կերպով շարունակուել մինչեւ Օգոստոս, այնուհետեւ մասնակիորէն շարունակուել մինչեւ տարուայ վերջ: Համակարգը ամենուր նոյնն էր:

Իր կրատրական եւ մեղաւոր վերաբերմունքով գերմանական կառավարութիւնը, ով կարող էր լռութեան չմատնել կոտորածները եւ կանխել դրանք, ունի պատասխանատւութեան իր մասնաբաժինը: Որոշ տեղերում կոտորածները տեղի էին ունենում գերմանացի զինուորների ներկայութեամբ եւ երբեմն նաեւ մասնակցութեամբ (Լիման ֆոն Սանդերս, Էրզրումում Բոսսուէթ փաշա, միւսները Կիլիկիայում, Վանում, այլուր). շատ տեղերում գերմանացի սպաները առեւանգում էին հայ աղջիկներին:

Իրական մեղաւորներին կարելի է բաժանել չորս խմբի՝

ա) Նրանք, ովքեր մշակել էին ծրագիրը

բ) Նրանք, ովքեր տուել էին հրամանները եւ կազմակերպել կոտորածները

գ) Նրանք, ովքեր ղեկավարել էին կոտորածները

դ) Նրանք, ովքեր իրականացրել էին կոտորածները

Նրանք, ովքեր մշակել էին ծրագիրը: Կոտորածների ծրագիրը մշակուել եւ ծրագրատրուել էր Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան կողմից Կոստանդնուպոլսում եւ Էրզրումում տեղի ունեցած համաժողովների ժամանակ 1915ի սկզբին, որից յետոյ նրանք իրենց յայտնի անդամներին յատուկ հրահանգներով ուղարկեցին գաւառներ (բժիշկ Բեհաէդդին Շաքիր, Հիւմի Բէյ, Հալիլ եւ այլոք):

Նրանք, ովքեր տուել էին հրամանները եւ կազմակերպել կոտորածները: Կառավարութիւնը, Սայիդ Հալիմի եւ Թալէաթի երկու դահլիճները կոտորածների հրամաններ էին տալիս երրորդ բանակային զօրամասի ղեկավար Մահմուդ Քերիմ փաշային, Միջագետքի բանակի ղեկավար Խալիլ փաշային եւ սիրիական բանակի հրամանատար Ջեմալ փաշային: Նրանք ձեւատրում էին յատուկ յանձնաժողովներ՝ Թեշքիլաթը Մահսուսա (յատուկ կազմակերպութիւն), եւ միւս կողմից նրանք իրենց հրահանգներն էին տալիս վալիներին, նրանց միջոցով մութեսերիֆներին, կայմակամներին եւ մուդիրներին, ովքեր վերջիններիս ենթականերն էին: Այս ձեւով ոչնչացման ծրագիրը կազմակերպում էր Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան գաւառային ակումբների ղեկավար յանձնաժողովների հետ համագործակցութեամբ, քաղաքացիական վարչութիւնների, պահակազօրի, ռազմական հրամանատարների եւ թուրք եւ քուրդ երեւելիների միջոցով, որոնց մէջ թուրք մտաւորականները ակտիվ մասնակցութիւն ունէին (պատգամատրներ, բժիշկներ, ռազմական գործիչներ, հրապարակախօսներ, պրոֆեսորներ, կրօնատրներ են.):

Նրանք, ովքեր կառավարում, ղեկավարում էին կոտորածները: Կոտորածները ղեկավարվում էին պահակազօրի հրամանատարների, յայտնի թուրքերի եւ քրդերի, չեթէբաշիների, կոտորածների խմբերի ղեկավարների, խորհրդարանի անդամների եւ վարչական պաշտօնեաների կողմից:

Նրանք, ովքեր իրականացնում էին կոտորածները: Գործնականում հնարաւոր չէ նման կարճ ժամանակահատուածում իրականացնել մօտ մէկ միլիոն հայ բնակչութեան կոտորածն ու տեղահանութիւնը, վերջիններիս ողջ ունեցուածքի կողոպուտը, գոյքի ոչնչացումը առանց մուսուլման բնակչութեան մասնակցութեան, որոնք տարուած էին սրբազան պատերազմի գաղափարով եւ կողոպուտի ցանկութեամբ եւ դարձան գործիք իրենց ղեկավարների ձեռքին: Թուրքերի մօտ յիստուն տոկոսը գիտակցաբար կամ անգիտակցաբար դարձաւ Միութիւն եւ Առաջադիմութիւն Կուսակցութեան անդամ, բոլորը մասնակցեցին հակահայկական գործին՝ սկսած հա-

մայիքների ղեկավարներից եւ մտաւորականներից մինչեւ ամենահամեստ գիտա-
ցին, անգամ՝ կանայք:

Ինչ վերաբերում է կողոպուտին եւ այլ անբաժնիքներին, շատ քիչ թուով մու-
տովմաններ չեն մասնակցել սրան: Կոտորածների ողջ ընթացքում, երկրի ամենա-
ազդեցիկ շրջանները, օսմանեան բարձրագոյն օրէնսդիր մարմինը, լրատուամիջոց-
ները իրենց ծայնը չեն բարձրացրել այս ամէնի դէմ: Նոյնիսկ օսմանեան խորհրդա-
րանում որոշ պատգամատուներ անգամ յայտարարում էին որ հայ ներկայացուցիչ-
ները պէտք է սպանուեն, ինչը միւսների կողմից ընդունուում էր լռութեամբ: Ինչ վերա-
բերում է թուրքական լրատուամիջոցներին, ապա նրանք մշտապէս կոտորածների
կոչեր էին հրապարակում:

Հայոց պատրիարքը վերջերս Կոստանդնուպոլսում Դաշնակիցների ներկայա-
ցուցիչների ուշադրութիւնը հրաւիրեց այս փաստերի վրայ՝ ներկայացնելով կոտոր-
ածների մասնակիցների ցուցակներ: Ի պաշտպանութիւն այս մեղադրանքների
մենք կցում ենք կոտորածների մասնակիցների անունների ցուցակը: Իրական մե-
ղատուները առաջին երեք խմբերին պատկանողներն են:

Կոստանդնուպոլսում Դաշնակիցների առաջարկով ձեւատրուել է Ռազմական
Դատարան՝ բաղկացած թուրքերից, որոնց նստավայրը միայն մայրաքաղաքն է եւ
ում առաքելութիւնը կոտորածների իրականացնողների վերաբերեալ փաստերի հա-
ւաքումն է, մինչդեռ կոտորածների մեծ մասը տեղի է ունեցել գաւառներում: Այս
դատարանը, որն արդէն գործում է շուրջ երեք ամիս, իր երկիմաստ եւ դանդաղկոտ
գործողութիւններով որեւէ վստահութիւն չի ներշնչում:

Կոստանդնուպոլսում Դաշնակիցների ներկայացուցիչները, հաւանաբար չցան-
կանալով միջամտել այդ իրաական գործընթացին, կոտորական վերաբերմունք են
դրսետրում, ինչը էլ անելի է բարդացնում հարցը, քանի որ այս բացառիկ թուր-
քական դատարանը որոշել է դատել մեղադրեալներին սովորական իրաական
գործընթացով. անվերջ հարցաքննութիւններ, բազմաթիւ վկաների լսումներ են.,
ասես տեղի ունեցածը անհատական յանցագործութիւններ են, մինչդեռ տեղի ունե-
ցած յանցագործութիւնը անհատական բնոյթ չունի եւ որպէս ականատես վկաներ
ոչ թէ անհատներն են, այլ ամբողջ բնակչութիւնը, մենք նոյնիսկ կարող ենք ասել՝
ողջ աշխարհը, վկաներ կան բոլոր ազգութիւններից: Յանցագործութիւնը ունի քաղ-
աքական ենթիմաստ, ծրագրատրուել է քաղաքական կազմակերպութեան կողմից,
ով ունէր օսմանեան խորհրդարանի ծայների անելի քան երկու երրորդը:

Կազմակերպուած լինելով կառավարութեան կողմից, ղեկավարուելով վարչա-
կան ու ռազմական ղեկավարութեան եւ համայնքների իշխանութիւնների եւ երեւե-
լիների կողմից՝ այն իրականացրել են պահակազօրը, զինուորները եւ բնակչութիւ-
նը: Հետեւաբար, մենք իրատունք ունենք որպէս իրական մեղատուներ համարել այն
անձանց, ովքեր 1915 Ապրիլից գլխատրում էին նշուած գործառոյթները:

Այն հանգամանքը, որ թուրքական դատարանը դիտմամբ վարում է դատական
գործընթացը ճգճելով քաղաքականութիւն, եւ որ Կոստանդնուպոլսում դաշնակից-
ների ներկայացուցիչները համաձայնութիւն են տուել այս սովորական դատագոր-
ծընթացի շարունակութեանը հարցաքննութիւնների եւ վկաների լսումների միջո-
ցով, կարող է հանգեցնել միայն բացասական արդիւնքների:

1. Սա յանցագործներին հնարավորութիւն եւ միջոցներ է տալիս փախչել ար-
դարադատութիւնից (ինչը որոշ չափով, ցաւօք, իրականութիւն է դարձել):

2. Սա յանցագործներին հնարաւորութիւն եւ միջոցներ է տալիս թաքնուած
հաաքագրել որոշ տարրերի, ինչպիսիք են օրինակ երեւելիները, նախկին պաշտօն-

եաները, նախկին զինուորականները, ամբոխավարները, նոր վտանգներ եւ անկարգութիւններ հրահրել, որոնց նախանշաններն արդէն իսկ ակնյայտ են:

3. Յանցագործների անպատժելիութիւնը քաջալերում է այս վտանգաւոր տարրերին, դարձնում նրանց քաղաքական յայտն առաւել հնարաւոր, թուլացնում է Դաշնակիցների ազդեցութիւնն ու հեղինակութիւնը, որը նրանք ունէին սկզբնական շրջանում եւ ինչը անհրաժեշտ է պահպանել ապագայի համար:

Ելնելով վերոգրեալից՝ մենք խնդրում ենք Դաշնակիցների կառավարութիւններին որքան հնարաւոր է շուտ իրենց ձեռքը վերցնել արդարադատութեան իրականացումը՝ արեւելքում քրիստոնեաներին սպառնացող նոր եւ զարհուրելի աղէտը կանխելու համար:

Աւետիս Ահարոնեան, Հայաստանի Հանրապետութեան պատուիրակութեան նախագահ

Պօղոս Նուպար, Հայկական ազգային պատուիրակութեան ղեկավար

Յաւելում 2

ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻ ՀԱՅԵՐԻ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԳԼԽԱԴՈՐ ՀՐԱՀՐՈՂՆԵՐԻ ԵՒ ՅԱՆՑԱԳՈՐԾՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ՅՈՒՑԱԿ (1914-1918)

Այսօր Խաղաղութեան Պայմանագիրը ստորագրած տէրութիւնները հաասարապէս ցանկանում են, որ մոռացութեան մատնուեն այն իրադարձութիւնները, որոնք խաթարել էին խաղաղութիւնը Արեւելքում:

Ներքոստորագրեալները, գործելով իրենց լիակատար լիազօրութիւնների համաձայն, պայմանաւորուել են հռչակել հետեւեալը.

1. Թուրքիայում, նաեւ Յունաստանում բնակուող կամ նախկինում բնակուած որեւէ անձ չի կարող որեւէ պարագայում կամ պատրուակով ենթարկուել պատասխանատուութեան 1914 թուականի Օգոստոսի 1ից մինչեւ 1922ի Նոյեմբերի 20ը ձեռնարկուած որեւէ ռազմական կամ քաղաքական գործողութիւնների համար, կամ այդ օրերին ստորագրուած Խաղաղութեան Պայմանագրի ստորագրող կողմին կամ այդ տէրութիւնների քաղաքացիներին որեւէ կերպ աջակցելու համար:

2. Նմանապէս, Խաղաղութեան Պայմանագրով Թուրքիայից անջատուած տարածքների ոչ մի բնակիչ չի կարող ենթարկուել որեւէ հետապնդման՝ 1914ի Օգոստոսի 1ից մինչեւ 1922 Նոյեմբերի 20ը ընկած ժամանակահատուածում իր՝ Թուրքիային դէմ կամ կողմ քաղաքական կամ ռազմական վերաբերմունքի կամ նշուած պայմանագրով իր ազգութեան որոշման համար:

3. Ամբողջական եւ լիակատար համաներում է շնորհում համապատասխանաբար Թուրքիայի կառավարութեան եւ Յունաստանի կառավարութեան կողմից՝ նոյն ժամանակահատուածում կատարուած բոլոր յանցագործութիւնների կամ իրաւախախտումների համար, որոնք ակնյայտօրէն կապուած էին այդ ժամանակահատուածում տեղի ունեցած քաղաքական իրադարձութիւնների հետ:

4. Թուրք եւ Խաղաղութեան պայմանագիրը ստորագրող միա տէրութիւնների քաղաքացիները, ովքեր ձերբակալուել, հետապնդուել կամ դատապարտուել են նշուած տէրութիւնների իշխանութիւնների կամ համապատասխանաբար թուրքական իշխանութիւնների կողմից քաղաքական կամ ռազմական բնոյթի պատճառաբանութեամբ մինչեւ 1922 Նոյեմբերի 20ը, այն տարածքում, որը Խաղաղութեան

Պայմանագրի համաձայն մնում է Թուրքիային, օգտում են համաներումից, իսկ եթե նրանք ձերբակալու ած են, ապա պետք է յանձնունեն իրենց պետությունների իշխանություններին: Այս պայմանը վերաբերում է նաեւ ազգութեամբ թուրք այն անձանց, որոնք ձերբակալուել, հետապնդուել կամ պատժուել են այն տէրութիւնների իշխանութիւնների կողմից, որոնք զբաղեցրել են նշուած տարածքի մի մասը նոյնիսկ նշուած օրուանից առաջ կատարուած սովորական օրէնքի խախտման համար, եւ նոյնիսկ նրանք, ովքեր հեռացուել էին Թուրքիայից: Բացառութիւն են կազմում նրանք, ովքեր գրաւման բանակներին պատկանող անձի դէմ իրականացրել են յարձակում, որը յանգեցրել է մահուան կամ ծանր վիրաւորութեան:

5. Վերոնշեալ պատճառաբանութեամբ կայացուած բոլոր դատավճիռները ուժը կորցրած են ճանաչուում, եւ արդէն յարուցուած ցանկացած վարոյթ կասեցուում է:

6. Թուրքիայի կառավարութիւնը, կիսելով ընդհանուր խաղաղացման/հաշտեցման պետութիւնների ցանկութիւնը, յայտարարում է, որ չի վիճարկի Դաշնակից Տէրութիւնների հովանու ներքոյ՝ 1918ի Հոկտեմբերի 20ի եւ 1922 Նոյեմբերի 20ը ընկած ժամանակահատուածում իրականացուած միջոցառումները, որոնց նպատակը պատերազմի հետեւանքով բաժանուած ընտանիքների վերամիաւորումն է եւ գոյքը օրինական սեփականատէրերին յանձնելը: Այնուամենայնիւ, այս մտադրութիւնը չի բացառում այս միջոցների վերանայման հնարաւորութիւն՝ շահագրգիռ կողմերի կողմից այդ խնդրի վերաբերեալ հայցադիմելու դէպքում: Անձանց եւ գոյքի վերաբերեալ դիմումները քննելու է Կարմիր Մահիկի եւ Կարմիր Խաչի պատուիրակներից կազմուած յանձնաժողովը: Վէճի դէպքում պատուիրակները կ'ընտրեն դատաւորի, իսկ եթէ նրանք ի վիճակի չլինեն համաձայնութեան գալ դատաւորի նշանակման հարցում, ապա դատաւորը նշանակուելու է Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից:

7. Մեծն Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի կառավարութիւնները, գիտակցելով խաղաղութեան հաստատման տեսանկիւնից այն միջոցառման կարեւորութիւնը, որը կազմում է 1923 թուականի Յունուարի 30ին Յունաստանի եւ Թուրքիայի կառավարութիւնների միջեւ կնքուած Համաձայնագրի 5րդ յօդուածի առարկան, որը վերաբերում է ներկալուած քաղաքացիական անձանց վերադարձին եւ ռազմագերիների փոխանակմանը, յայտարարում են, որ իրենք եւս պատրաստ են ընդունելու Թուրքիայի կառավարութեան կողմից փոխադարձութեան դէպքում, իրականացնել նմանատիպ միջոցառումներ այն թուրք ռազմագերիների եւ ներգաղթեալ քաղաքացիական անձանց նկատմամբ, որոնք դեռ իրենց մօտ են, բացառութեամբ այն անձանց, ովքեր սովորական յանցագործութիւններ եւ իրաւախախտումներ են կատարել 1922 Նոյեմբերի 20ից ի վեր:

THE CASE OF TURKEY'S INTERNATIONAL LEGAL RESPONSIBILITY AFTER WORLD WAR I

(Summary)

EDITA G. GZOYAN (editagzoyan@gmail.com)

The principle of state sovereignty, launched in Westphalia in 1648, showed its first serious cracks after WWI. The chaos and devastation of war, the pressing demand for peace and public protests against impunity for atrocities became the basis for breaking the link with the past system and building a normative basis for human life and dignity.

The new approach, which called into question the absoluteness of state sovereignty, gave rise to the criminal responsibility of states for war crimes and crimes against humanity. At the epicenter of these events was also the Ottoman Empire, which during WWI had committed war crimes and crimes against humanity.

Indeed, under the guise of the world war, the Turkish authorities initiated the annihilation of the native Armenian population of the Ottoman Empire through massacres, deportations and forced assimilation. Already on May 24, 1915, the allied states, Russia, Great Britain and France, issued a joint statement in which they qualified the actions carried out against Armenians as crimes “against humanity and civilization”, laying the foundation for the formation of a new crime in international criminal law. After the end of the war, during the Paris Peace Conference, the Commission on the responsibility of the authors of the war and on enforcement of penalties was created. It was supposed to identify the initiators of WWI and determine the punishments for those who committed war crimes and crimes against humanity.

The Commission also investigated Turkey's international legal responsibility for the Armenian massacres in the context of crimes against humanity. Although the wording “crime against humanity” was not included verbatim in the text of the Peace Treaty of Sèvres, in fact, Article 230 was related to this new crime, which was formalized, however, only after WWII.

Against the backdrop of these developments the paper examines the case of Turkey's international legal responsibility vis-à-vis crimes it committed against humanity.